այս գրոյս մեկն ի Համիր է եկեր. եւ զնորա մեկ օրինակն Աւետիս կաթողիկոսն է տարեր ի հետն, զմի օրինակն Համբեցիքս մեզ էին յղրկել ասելով թէ տեսէք տեսէք զմեր կաթողիկոսիս զիսայտառակութիւնն, զայսպիսի հերձուածողն՝ դուք ի՞նչպէս կաթողիկոս կու ընդունիք. եւ զայս եկեալ թուղթս մեք ամենեքեան ականատես եղեալ ընթերցաք»։

Գրիգոր Կեսարացի, իր այս չափազանց հետաքրքրական թուղթին մէջ (տե՛ս Գարեգին եպիսկ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ. 1885, էջ 280-293), որ կարեւոր վաւերագիր մըն է ժամանակին հայ եկեղեցւոյ ներքին քայքայուն վիճակը ցոյց տուող ամէն մանրամասնութեամբ, Մելքիսեդեկի արարքները թուելէ յետոյ կ'ըսէ՝ թէ «այս ի՞նչ բան է քո արած բանն. զի կամիս երկրորդ Եզր լինել, եզերիչ եւ խանգարիչ Հայոց ազգիս, զի թէ իբրեւ զքաջ հովիւ հոգացող եւ խնամող չես, վասն է՞ր որպէս զվարձկան եւ իբրեւ զչար գազան պատառող լինիս բանաւոր հօտին Քրիստոսի. զի՞նչ կ'ուզես այս ողորմելի եւ տառապեալ ազգս Հայոց. է՞ր չես թողուր զիւրեանս յիւրեանց ապիրատութեանն. զի թէպէտ որ ազգս Հայոց մարմնով ծառայ են եւ ապիրատ, այլ քրիստոնեական ուղղափառ հաւատովս ազատ են. հոգւով փարթամ եւ հարուստ օ-